ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԻԼԻՆ ՅԱԿՈԲԵԱՆ ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները եւ շնորհաւորում ծննդեան 75-րդ տարեդարձի առիթով:

Սիրելի պրն. Յակոբեան,

Աստուածպարգեւ Ձեր կեանքը Դուք ապրում էք Հայրենի մեր երկրի հանդէպ որդիական սիրով՝ միշտ ձգտելով Ձեր կարողութիւնները ծառայեցնել հաւատաւոր մեր ժողովրդին: Երկար տարիներ Դուք ղեկավարեցիք Երեւանի Մ. Հերացու անուան բժշկական համալսարանը, հեղինակեցիք բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններ ու աշխատութիւններ՝ գնահատարժան վաստակ բերելով ի նպաստ մեր երկրում առողջապահութեան բնագաւառի զարգացման:

Այսօր առիթ ունենք առանձնակի գոհունակութեամբ անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ որդիական Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին: Տարիներ շարունակ, որպէս Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Դուք նախանձախնդիր ջանքեր էք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելութեան առաւել արդիւնաւորմանը, նոյն անսպառ եռանդով Ձեր հարուստ փորձառութիւնը ծառայեցնում Մայր Աթոռի «Իշմիրլեան» հիւանդանոցի գործունէութեանը՝ ի սպասաւորութիւն մեր ժողովրդի զաւակների: Մեզ համար ուրախութիւն է մշտապէս ականատես լինել Ձեր էջմիածնասիրութեանը, որ արտայայտում էք Ձեր եկեղեցանուէր ընթացքով ու սրտանձնած ապրուածահաճոյ յանձնառութիւններով:

Երկարամեայ մեր ծանօթութեան ընթացքին սրտի բերկրանօք բազմիցս առիթ ենք ունեցել տեսնելու Ձեր բարի ու անկեղծ ոգու անվերապահ նուիրումը եւ անսակարկ հաւատարմութիւնը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ առ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը:

Հայրենիքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍԾ ՆՈՐՈՒԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Յուլիսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 730